# Արձանագրություն թիվ 3

ՀԱԳ-ԳՀԱՊՁԲ-19/02 ծածկագրով, գնանշման հարցում ընթացակարգով՝ տնտեսական ապրանքների ձեռքբերման, գնահատող հանձնաժողովի նիստի

Ք.Երևան 20 փետրվարի 2019թ.

Ժամը 11:00

**Մասնակցում էին՝**

Հանձնաժողովի նախագահ՝ Մարիամ Համբարձումյան

Անդամներ՝ Գրիշա Հովսեփյան

Լևոն Սեդրակյան

Գնումների համակարգող՝ Ռազմիկ Առաքելյան

## ՕՐԱԿԱՐԳ

1. ՀԱԳ-ԳՀԱՊՁԲ-19/02 ծածկագրով, գնանշման հարցում ընթացակարգով՝ տնտեսական ապրանքների տեխնիկական բնութագրերը ներկայացնելու մասին,
2. մրցույթի մասնակիցների կողմից, հայտը ներկայացվելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների մասին,
3. Հանձնաժողովի որոշումների մասին:

**1. Տեխնիկական բնութագրերի մասին**

1.1 ՀԱԳ-ԳՀԱՊՁԲ-19/02 ծածկագրով, գնանշման հարցում ընթացակարգով՝ տնտեսական ապրանքների, տեխնիկական բնութագրերը սահմանված ժամկետում ներկայացրել են 1-ին տեղեր զբաղեցրած ներքո նշյալ ընկերությունները, հետևյալ՝

- ✓ << Պետրոսյան Հոլդինգ >> ՍՊԸ, թիվ՝ 2, 3, 5, 6 և 7-րդ,
- ✓ << Էկոմիքս >> ՍՊԸ, թիվ՝ 8-րդ, չափաբաժիններով:

**2. ՊԵԿ կատարված հարցման մասին**

2.1 Սույն թվականի փետրվարի 12-ին, ՊԵԿ կատարված, Հայտը ներկայացվելու օրվա դրությամբ 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների, ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների մասին հարցմանը, սույն թվականի փետրվարի 19-ին տրվեց համապատասխան եզրակացությունը, առ այն, որ 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներ՝ «Պետրոսյան Հոլդինգ» և «Էկոմիքս» ՍՊ ընկերությունները չունեն, իսկ «ՀԻԴՐՈ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունը, որն առաջին տեղ զբաղեցրած մասնակից էր ճանաչվել թիվ՝ 1, 4 և 9-րդ չափաբաժիններով, ունի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ:

**3. Հանձնաժողովը որոշեց.**

3.1 Մերժել «ՀԻԴՐՈ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության հայտը, քանի որ գերազանցում է, գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի, 2-րդ ենթակետով սահմանված (*գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ*) թույլատրելի

3.2 ՀԱԳ-ԳՀԱՊՁԲ-19/02 ծածկագրով, գնանշման հարցում ընթացակարգով՝ տնտեսական ապրանքների, (տեխնիկական բնութագրերը ուսումանսիրելուց հետո) ձեռքբերման ընթացակարգի, 1-ին տեղ զբաղեցրած և ընտրված ճանաչել ներքո նշյալ մասնակիցներին, հետևյալ չափաբաժիններով՝

| Հ/Հ | Ապրանքի անվանումը | 1-ին տեղ զբաղեցրած Մասնակցի անվանումը |
|---|---|---|
| 1 | Լվացքի փոշի, ձեռքով լվանալու համար | _____ |
| 2 | Աշխատանքային ձեռնոցներ /ռետինե/ | << Պետրոսյան Հոլդինգ >> ՍՊԸ |
| 3 | Օճառ ձեռքի | << Պետրոսյան Հոլդինգ >> ՍՊԸ |
| 4 | Հեղուկ օճառ | << Պետրոսյան Հոլդինգ >> ՍՊԸ |
| 5 | Կահույք մաքրելու լաթ | << Պետրոսյան Հոլդինգ >> ՍՊԸ |
| 6 | Հատակի լվացման լաթ | << Պետրոսյան Հոլդինգ >> ՍՊԸ |
| 7 | Ավել, սովորական | << Պետրոսյան Հոլդինգ >> ՍՊԸ |
| 8 | Դույլ պլաստմասե (5լ.) | <<Էկոմիքս>> ՍՊԸ |
| 9 | Աղբարկղ պլաստմասե | _____ |

3.2 ՀԱԳ-ԳՀԱՊՁԲ-19/02 ծածկագրով, գնանշման հարցում ընթացակարգով՝ տնտեսական ապրանքների, թիվ՝ 4-րդ չափաբաժնով, 1-ին տեղ զբաղեցրած և ընտրված ճանաչել՝ << Պետրոսյան Հոլդինգ >> ՍՊԸ-ին, որպես հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակից:

3.3 ՀԱԳ-ԳՀԱՊՁԲ-19/02 ծածկագրով, գնանշման հարցում ընթացակարգով՝ տնտեսական ապրանքների, թիվ՝ 1 և 9-րդ չափաբաժիններով, 1-ին տեղ զբաղեցրած ճանաչել՝ <<ՌԵԱՔԻՄ>> ՍՊԸ-ին, որպես հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակից:

3.4 Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում կատարել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ <<ՌԵԱՔԻՄ>> ՍՊԸ-ի, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

3.4 Ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել 6-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 6.1-ի (ապրանքների անվանումը և տեխնիկական բնութագրերը): Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում մերժել առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:

3.5 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել՝ <<Հայաստանի ազգային գրադարան>> ՊՈԱԿ-ի նիստերի սրահում (Թամանյանական մասնաշենքի 2-րդ հարկ), ք. Երևան, Տերյան 72 հասցեում, առաջին տեղը զբաղեցրած Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը, հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող ոչ ուշ, քան երրորդ աշխատանքային օրը, ժամը 11:00 -ին:

Ընդունվեց կողմ՝ 3, դեմ՝ 0 :

Հանձնաժողովի նախագահ՝

Մարիամ Համբարձումյան _____

Անդամներ՝

Գրիշա Հովսեփյան _____

Լևոն Սեդրակյան _____

Գնումների համակարգող՝

Ռազմիկ Առաքելյան _____